ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՄՐԳԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
АРМАВИРСКИЙ ОБЛОСТЬ
МУНИЦИПАЛИТЕТ
С. МРГАСТАНА

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մրգաստանի համայնքապետարան, Մրգաստան 3/15
հեռ. 0231-6-38-10, 094-80-53-63 mrgastan.armavir@mta.gov.am

Հ.Հ. ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ՝ Հ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆԻՆ

N-6-172

«5» 11 2018թ.

ՀԱՐԳԵԼԻ ՊԱՐՈՆ ՄԱՐԶՊԵՏ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 56-րդ հոդվածի վեցերորդ մասով, Ձեզ է ներկայացվում՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մրգաստան համայնքի ավագանու 2018թվականի հոկտեմբերի 31-ին կայացած թիվ 5 հերթական նիստի որոշումները:

Առդիր՝ 14թերթ

ՄՐԳԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ

ՂԵԿԱՎԱՐ՝ Ռ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՀԱՎԵԼՎԱԾ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ՄՐԳԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018ԹՎԱԿԱՆԻ
ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 31-Ի ԹԻՎ 5 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ
ԹԻՎ 34 ՈՐՈՇՄԱՆ

ՕՐԱԿԱՐԳ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ՄՐԳԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ՆԻՍՏԻ

34.ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 31-Ի ԹԻՎ 5 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

/ԶԵԿՈՒՑՈՂ՝ Ա. ՂԱՐԻԲՅԱՆ/

35-Ա ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԵՐՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՂՈՐԴՄԱՆԸ՝ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ:

/ԶԵԿՈՒՑՈՂ՝ Ռ. ԽԱՉԱՏՐՅԱՆ/

36.ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄ՝ ՀԱՅԿԱԶ ԱՅՍԵՐԻ ԱՍԱՏՐՅԱՆԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

/ԶԵԿՈՒՑՈՂ՝ Ռ. ԽԱՉԱՏՐՅԱՆ/

37.ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԸ ԽՆԱՊԱՏԵԼՈՒ ՀԱՄԱՐ՝ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

/ԶԵԿՈՒՑՈՂ՝ Ռ. ԽԱՉԱՏՐՅԱՆ/

38.ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻՑ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՏԱՐԲԵՐ ԲՈՒՀԵՐՈՒՄ ՍՈՎՈՐՈՂ 2018-2019ԹԹ. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ, ԱՌԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻՆ ՍԵՊՏԵՄԲԵՐ-ԴԵԿՏԵՄԲԵՐ ԱՄԻՍՆԵՐԻ ՀԱՄԱՐ՝ ՃԱՆԱՊԱՐՀԱԾԱԽՍ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

/ԶԵԿՈՒՑՈՂ՝ Ռ. ԽԱՉԱՏՐՅԱՆ/

39.ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

/ԶԵԿՈՒՑՈՂ՝ Ռ. ԽԱՉԱՏՐՅԱՆ/

ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ա. ՂԱՐԻԲՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ
ՄԱՐԶԻ ՄՐԳԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մրգաստանի համայնքապետարան, Մրգաստան 3/15
հեռ. 0231-6-38-10, 094-80-53-63

ՈՐՈՇՈՒՄ

«31» հոկտեմբերի 2018թվական թիվ 34

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 31-Ի ԹԻՎ 5 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի վեցերորդ մասով.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ է

1.Հաստատել՝Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մրգաստան համայնքի ավագանու 2018թվականի հոկտեմբերի 31-ի թիվ 5 հերթական նիստի օրակարգը՝ համաձայն հավելվածի:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Ավագանու անդամներ	4 կողմ	Օդեմ	0 ձեռնպահ
Հ. Եղիգարյան			
Թ. Ջանգիրյան			
Ա. Ասատրյան			
Ա. Հովակիմյան			

ՄՐԳԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ռ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

2018թվական հոկտեմբերի 31
գ. Մրգաստան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ
ՄԱՐԶԻ ՄՐԳԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մրգաստանի համայնքապետարան, Մրգաստան 3/15
հեռ. 0231-6-38-10, 094-80-53-63

ՈՐՈՇՈՒՄ

«31» հոկտեմբերի 2018թվական թիվ 35-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2018ԹՎԱԿԱՆԻ ԵՐՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՂՈՐԴՄԱՆԸ՝ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի առաջին մասի առաջին կետով.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ է

1.Հավանություն տալ՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մրգաստան համայնքի ղեկավարի հաղորդմանը, 2018թվականի երրորդ եռամսյակի բյուջեի կատարման վերաբերյալ:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Ավագանու անդամներ	4 կողմ	Օդեմ	0 ձեռնպահ
Հ. Եդիգարյան			
Թ. Ջանգիրյան			
Ա. Ասատրյան			
Ա. Հովակիմյան			

ՄՐԳԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ռ.ԽԱՉԱՏՐՅԱՆ

2018թվական հոկտեմբերի 31
գ. Մրգաստան

ՀԱՎԵԼՎԱԾ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ
ՄԱՐԶԻ ՄՐԳԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
2018ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 31-Ի, ԹԻՎ 5 ՀԵՐԹԱԿԱՆ
ՆԻՍՏԻ, ԹԻՎ 35-Ա ՈՐՈՇՄԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2018ԹՎԱԿԱՆԻ ԵՐՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2018թվականի հոկտեմբերի 26-ին, ժամը 16:00-ին Մրգաստանի համայնքապետի աշխատասենյակում, ավագանու նիստից առաջ տեղի ունեցավ Հ. Հ. Արմավիրի մարզի Մրգաստան համայնքի ղեկավար՝ Ռաֆիկ Խաչատրյանի հաշվետվության նախագծի քննարկումը, 2018թվականի երրորդ եռամսյակի բյուջեի կատարման վերաբերյալ:
Ներկա էին՝ համայնքի բնակիչներ, ավագանու անդամներ:

Օրակարգում՝

1.Համայնքի ղեկավարի 2018թվականի երրորդ եռամսյակի բյուջեի կատարման հաշվետվության նախագծի քննարկումը:

Զեկուցող՝ /Ռ. Խաչատրյան/

2.Հարց ու պատասխան

Ժողովը բացեց համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար՝ Ս. Ղարիբյանը, ով ներկաներին ծանոթացրեց օրակարգին:Նա նշեց, որ բյուջեի միջոցով իրականացվում է համայնքի կենսագործունեությունն ապահովող ֆինանսատնտեսական քաղաքականությունը:Այն հնարավորություն է տալիս մոտիկից ծանոթանալու բնակչության հոգսերին, մտահոգություններին, լսել գնահատականներ կատարված աշխատանքների արդյունքների վերաբերյալ:Խնդրեց ելույթից հետո կարծիքներ արտահայտել համայնքի ղեկավարի «Բյուջեի կատարման վերաբերյալ» 2018թվականի երրորդ եռամսյակի ընթացքում կատարված աշխատանքների մասին և գնահատել աշխատանքը:
Այնուհետև ձայնը տրվեց համայնքի ղեկավար՝ պարոն Ռ. Խաչատրյանին:
Ողջունելով ներկաներին պարոն Ռ. Խաչատրյանը իր ելույթը սկսեց հետևյալ տողերով՝ Հարգելի ներկաներ.
Իմ ելույթով կփորձեմ ըստ ոլորտների ամբողջական պատկերով ներկայացնել՝ համայնքի բյուջեի կատարման աշխատանքները, 2018թվականի երրորդ եռամսյակի եկամուտների և ծախսերի վերաբերյալ:
Իրականացնելով օրենքով սահմանված կարգով, համայնքի ղեկավարի իրավասությունները, առաջնորդվելով ավագանու կանոնակարգով հաշվետու ժամանակաշրջանում, իմ կողմից հրավիրվել և վարվել է ավագանու 4 նիստ, որից 3 հերթական և 1 արտահերթ, որտեղ քննարկվել են համայնքին վերաբերվող կարևորագույն հարցեր:
Այժմ կնշեմ կատարված աշխատանքները՝ ըստ ոլորտների.
Մրգաստան համայնքի համայնքապետարանի աշխատակազմը բաղկացած է՝ 9 աշխատողներից, որից 6-ը հանրային ծառայողներ են, 1-ը զբաղեցնում է հայեցողական պաշտոն, 1-ը իրականացնում է տեխնիկական սպասարկում:
Համայնքապետարանի ենթակայության տակ գտնվում է «Մշակույթի տունը», որի աշխատակազմը բաղկացած է՝ 5 աշխատողներից, որոնցից մեկը զբաղեցնում է քաղաքացիական պաշտոն, երկուսը տեխնիկական աշխատողներ են, երկու հաստիքները թափուր են:
Համայնքի հողային տարածքը կազմում է՝ 296.6հա., որից 205.13հա. վարելահող, այգիները կազմում են՝ 5.44 հա.:
Գյուղացիների հիմնական զբաղմունքը՝ հողագործությունը և անասնապահությունն է:
Օրենքներով և այլ իրավական ակտերով, հաշվետու ժամանակաշրջանում իմ կողմից իրականացվել է պետության կողմից պատվիրակված և կամավոր լիազորություններ:

Հաշվետու ժամանակաշրջանում համայնքի ավագանու որոշմամբ հաստատվել է համայնքապետարանի և «Մշակույթի տան» աշխատակազմի հաստիքացուցակները և նրանցում կատարված փոփոխությունները:

Իմ հանձնարարությամբ համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարի կողմից իրականացվել է աշխատակազմի անխափան աշխատանքը:Մասնավորապես՝ նախապատրաստվել է համայնքի ավագանու նիստերի օրակարգը:Նիստում քննարկվող հարցերի նախագծերը, մեկ շաբաթ առաջ իրազեկվել է ավագանուն:

Նշված հարցերի օրակարգը և նրանում քննարկվող հարցերը փակցված են եղել հայտարարությունների համար նախատեսված տեղերում, համայնքի բնակիչներին իրազեկելու նպատակով:Համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարի կողմից, ավագանու որոշումները, համայնքի ղեկավարի որոշումները և կարգադրությունները՝ էլեկտրոնային տարբերակով առաքվել է մարզպետարան իսկ բյուջեում կատարված փոփոխությունները սահմանված ժամկետներում թղթային տարբերակով և էլեկտրոնային կրիչով առաքվել է Արդարադատության նախարարություն և մարզպետարան:

Ժամանակին տրվել է պատասխան մարզպետարանից և այլ կազմակերպություններից եկած գրություններին:

Կազմակերպվել է ընդունելություն՝ համայնքի ղեկավարի, աշխատակազմի քարտուղարի, համայնքի ավագանու, ինչպես նաև համայնքին կցված համայնքային ոստիկանի մոտ:

Ընդունելության դիմած՝ 10 քաղաքացիներից 10-ի դիմումներին տրվել է պատասխան օրենքի սահմաններում:Հիմնականում բնակչության դիմումները այս եռամսյակի ընթացքում սոցիալական բնույթի են:Դիմումներն գրանցվում են՝ գրանցամատյանում:

Համայնքի բնակչությանը երրորդ եռամսյակի նթացքում տրվել է՝ 45.0 /քառասունհինգ հազար/ դրամի դրամական օգնություն:

Ղեկավարվելով «ՏԻՄ» Հ.Հ. օրենքի պահանջներով իմ կողմից իրականացվել է օրենքով սահմանված մի շարք պարտադիր լիազորություններ:Հաշվետու ժամանակաշրջանում վերահսկողություն է իրականացվել հողի հարկի և գույքահարկի հարկատեսակների հավաքագրման աշխատանքների նկատմամբ:

Հողի հարկը երրորդ եռամսյակում 2000.0 /երկու միլիոն/ դրամի դիմաց, հավաքագրվել է՝ 1858.5 /մեկ միլիոն ութ հարյուր հիսունութ հազար հինգ հարյուր/ դրամ, կատարվել է՝ 92.9 տոկոսով:

Գույքահարկ շենք շինությունների համար՝ 60.0 /վաթսուն հազար/ դրամի դիմաց հավաքագրվել է՝ 14.7 /տասնչորս հազար յոթ հարյուր/ դրամ, կատարվել է՝ 24.5 տոկոսով:

Փոխադրամիջոցների համար՝ 1300.0 /մեկ միլիոն երեք հարյուր հազար/ դրամի դիմաց հավաքագրվել է՝ 1217.9 /մեկ միլիոն երկու հարյուր տասնյոթ հազար ինը հարյուր/ դրամ, կատարվել է՝ 93.7 տոկոսով:

Տեղական տուրքերի գծով՝ համայնքի տարածքում առևտրի կետերի, ծխախոտի և ոգելից խմիչքների վաճառքի թույլտվության համար, սահմանված՝ 20.0 /քսան հազար/ դրամի դիմաց, հավաքագրվել է 18.0 /տասնութ հազար/ դրամ, կատարվել է՝ 90 տոկոսով:

Ոչ հարկային եկամուտների մասով՝ 210.0 /երկու հարյուր տաս հազար/ դրամի դիմաց հավաքագրվել է՝ 121.0 /մեկ հարյուր քսանմեկ հազար/ դրամ, կատարվել է՝ 58 տոկոսով:

1.Քաղաքացիների տնտեսվարող սուբյեկտների իրավունքների պաշտպանության բնագավառում իմ կողմից իրականացվել է հետևյալ աշխատանքները.

1.1Համայնքի արխիվից, համայնքի բնակիչներին տրամադրվել է փաստաթղթեր և պատճեներ, տրվել են նաև տեղեկանքներ տարբեր կազմակերպություններ ներկայացնելու համար:

2.Ֆինանսների բնագավառում իրականացրել եմ հետևյալ պարտադիր լիազորությունները.

2.1Համայնքի ավագանու հաստատմանն եմ ներկայացրել համայնքի բյուջեի նախագիծը և դրանում առաջարկվող փոփոխությունները:

2.2 Իմ կողմից ստորագրվել են ֆինանսական փաստաթղթերը:

2.3Հարկերը և օրենքով սահմանված վճարումները չկատարած անձանց նկատմամբ կիրառվել է նախազգուշացում ծանուցման եղանակով առձեռն:

3.Հասարակական կարգի պահպանության բնագավառում, իմ կողմից իրականացվել է պետության պատվիրակած հետևյալ լիազորությունները.

3.1Համայնքին կցված ոստիկանի կողմից, շաբաթը մեկ անգամ ստացվել է տեղեկատվություն՝ համայնքում կատարված իրավախախտումների վերաբերյալ: Կիրառվել է՝ բանավոր նախազգուշացում:

4.Պաշտպանության բնագավառում իմ կողմից իրականացվել է հետևյալ կամավոր լիազորությունները.

4.1Աջակցել եմ զորակոչին, զորահավաքներին:Միջոցներ եմ ձեռնարկել՝ զին. ծառայողների ընտանիքների սոցիալական պաշտպանվածության բարելավման ուղղությամբ:Մասնավորապես՝ համայնքում ունենք զոհված ազատամարտիկի մայր, որի նկատմամբ մեր կողմից ցուցաբերվում է ամենօրյա ուշադրություն:
4.2Աշխատանքներ են տարվում նաև երիտասարդության շրջանում, ռազմահայրենասիրական ոգին բարձրացնելու նպատակով:
5.Աննկատ չեն մնացել ներկա պահին իրենց զինվորական պարտքը կատարող զինակոչիկների ընտանիքները:Բանակ զորակոչված յուրաքանչյուր զինվորի ընտանիքին ցուցաբերվում է դրամական աջակցություն՝ 30 000 /երեսուն հազար/ դրամի չափով, զինվորական երդմանը՝ ծնողների մասնակցությունը ապահովելու համար:Զորացրված զինվորները ևս արժանանում են դրամական աջակցության:

5.Քաղաքաշինության և կոմունալ տնտեսության բնագավառում, իմ կողմից իրականացվել է հետևյալ պարտադիր լիազորությունները

5.1Սահմանված դեպքերում համայնքի բնակչությունը իրազեկվել է քաղաքաշինական նորմերի փոփոխությունների մասին:
5.2Իրականացվել է հսկողություն համայնքի սեփականություն համարվող շենքերի և շինությունների նպատակային օգտագործման և պահպանման նկատմամբ:
5.3Կազմակերպվել է համայնքի որոշակի տարածքների բարեկարգում և կանաչապատում:
5.4Բնականոն ձևով կազմակերպվում է նաև աղբահանությունը:
5.5Ավագանու որոշմամբ կանոնակարգվել է գերեզմանատների գործունեությունը:
5.7Իմ կողմից մեծ ուշադրություն է դարձվում համայնքի հուշարձանի և հարակից տարածքի պահպանման աշխատանքներին:Տարածքը բարեկարգված է :
5.8Կադաստրի մարմիններում կազմակերպել ենք՝ բնակիչների սեփականության իրավունքի գրանցում և անշարժ գույքի համար սեփականության իրավունքը հաստատող վկայականի ստացում, ինչպես նաև կատարվել են ճշտումներ կապված համասեփականատերերի անվան, ազգանվան և հայրանվան հետ:Իրականացվում է նաև ինքնակամ կառույցների օրինականացման գործընթաց:
5.9Արդեն ավանդույթ է դարձել համայնքում իրականացվող շաբաթօրյակները, որոնց նկատմամբ իմ կողմից մեծ ուշադրություն է դարձվում :

6.Առևտրի և ծառայությունների բնագավառում իմ կողմից իրականացվել է հետևյալ պարտադիր լիազորությունները.

6.1Իմ կարգադրությամբ ստեղծվել է հանձնաժողով, որը տարվա ընթացքում եռամսյակը մեկ անգամ հսկողություն է իրականացնում առևտրի կետերում:
6.2Իմ կողմից տրվում է ոգելից խմիչքների և ծխախոտի արտադրանքի իրացման թույլտվություն՝ Հ. Հ. կառավարության սահմանած կարգով:
6.3Համայնքում առկա է երկու առևտրի կետ:

7.Մշակույթի, կրթության և երիտասարդության հետ տարվող աշխատանքների բնագավառում, իմ կողմից իրականացվել է հետևյալ պարտադիր լիազորությունները.

7.1Իմ հանձնարարությամբ՝ համայնքի առաջին դասարան հաճախող երեխաների համար, կազմակերպվել է գիտելիքի օրվան նվիրված միջոցառում, որի ընթացքում երեխաները ստացել են նվեր՝ պայուսակ և գրենական պիտույքների հավաքածու:

9.Իմ կողմից գյուղատնտեսության բնագավառում իրականացվել է հետևյալ պարտադիր լիազորությունները.

9.1Կազմակերպել եմ համայնքի տարածքում անասնաբույժական ծառայության միջոցառումներ:Մայիս ամսվանից համայնքի անասնաբույժի հետ կնքվել է՝ ծառայությունների մատուցման պայմանագիր, որի արժեքն է 240 000 /երկու հարյուր քառասուն/ հազար դրամ:
9.2Աջակցել եմ գյուղատնտեսական աշխատանքների իրականացմանը:
9.32018թ. մայիսի 10-ին Հանրապետությունում տեղացած կարկուտի ժամանակ, տնտեսություններին հասցրած վնասը հաշվարկելու համար, իմ կողմից ստեղծվել է հանձնաժողով, որը ուսումնասիրել և հաշվառել է տնտեսություններին հասցված վնասի չափը:Այն կազմել է՝ 11.4հա.:Ամփոփ տվյալները համապատասխան ձևաչափով ներկայացվել Արմավիրի մարզպետարանի գյուղ. վարչություն:Կարկուտից տուժած բնակչությանը բաժանվել է ցորենի սերմացու :

ՀԱՄԱՅՆՔԻ ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐԸ

1.Համայնքի աշխարհագրական դիրք:
2. Պահուստային հողերի առկայություն, որոնք շահագործվում են ամբողջությամբ:
3.Վերանորոգված միջնակարգ դպրոց:
4.Բուժ. կետ:
5.Ավտոկանգառ
6.Հանգստի գոտի /հուշարձանի տարածք/
7.Եկեղեցի 18-րդ դար /սուրբ Հովհաննես/

ՀԱՄԱՅՆՔԻ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԸ

ա/Կոմունալ տնտեսության ինժեներական ցանցերի, ճանապարհային ցանցերի անմխիթար վիճակը, որոնք վերանորոգման կարիք ունեն:
բ/«Մշակույթի տան» շենքի 3-րդ աստիճանիր վթարային վիճակը:
գ/Ոռոգման ջրի մատակարարման անկազմակերպ բնույթը /կիսախողովակների բացակայությունը/:
դ/Գործազուրկների մեծ քանակը:
ե/Մեծ թիվ են կազմում սոցիալապես անապահով ընտանիքները:
զ/Շատ են անտունները, որոնք ունեն բնակարանային ապահովման կարիք:
է/Համայնքը չունի մանկապարտեզ,համայնքապետարանի շենք, ինչպես նաև մշակութային օջախներ, խաղահրապարակ:
է/Դպրոցը չունի սպորտ դահլիճ:Սպորտ դահլիճի վերակառուցման համար, ստացել ենք դրամաշնորհ, որը հուսով եմ մինչև նված ժամկետի ավարտը կօգտագործվի շինարարության վրա:
թ/Կարևորագույն խնդիր է համայնքում հանրային տրանսպորտի աշխատանքը, որը իսպառ բացակայում է:
Ես այս ամենը ներառել եմ՝ 2017-2021թ.թ համայնքի զարգացման հնգամյա ծրագրում՝ նշելով համայնքում իրականացվող աշխատանքների առաջնահերթությունը:
Համայնքի հնգամյա զարգացման ծրագիրը հաստատվել էհամայնքի ավագանու՝ 2016թվականի դեկտեմբերի 16-ի թիվ 2 նիստի, թիվ 10-Ն որոշմամբ և ներկայացվել է Արդարադատության նախարարություն փորձաքննության:
Եզրափակելով ելույթս նշեմ, որ համայնքում առկա խնդիրները շատ են:Իմ նպատակն է անել հնարավորինս ավելին:
Համայնքում իրականացվել է ներդրումային ծրագրեր, մասնավորապես գերեզմանատան տարածքի լուսավորությունը, ինչպես նաև ներկա պահին աշխատանքներ են տարվում համայնքի կենտրոնական փողոցը մասնակի վերանորոգելու ուղղությամբ:

Օրակարգի՝ 2-րդ հարցով ելույթ ունեցողները նշեցին, որ համայնքում առաջնահերթ խնդիր է մանկապարտեզի առկայությունը, ինչպես նաև սպորտ դահլիճի կիսակառույց շենքի վերանորոգման աշխատանքները:Շատ կարևոր հարց է տրանսպորտի հարցը:
Առաջ քաշվեց նաև համայնքի ուսանողությանը աջակցելու հարցը:Համայնքի ղեկավարը խոստացավ կարգավորել հարցը:Սեղմ ժամկետներում ավագանու քննարկմանը ներկայացնել նախագիծ, համայնքի ուսանողության տեղաշարժը ապահովելու համար:
Ներկաները համայնքի ղեկավարի կատարած աշխատանքը՝ տվյալ ժամանակահատվածի համար գնահատեցին բավարար:
Ռ. Խաչատրյանը ավելացրեց, որ իր ցանկությունն է լուծում տալ առաջնահերթ խնդիրներին, սակայն բյուջեն թույլ չի տալիս կատարել նման մեծածավալ աշխատանքներ, և որ ակնկալում է համայնքի բնակիչների աջակցությունը համայնքում իրականացվող աշխատանքներին:
Օրակարգի հարցերը սպառվել են:

ՄՐԳԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ռ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մրգաստանի համայնքապետարան, Մրգաստան 3/15
հեռ. 0231-6-38-10, 094-80-53-63

ՈՐՈՇՈՒՄ

«31» հոկտեմբերի 2018 թվական թիվ 36

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄ՝ ՀԱՅԿԱԶ ԱՅՍԵՐԻ ԱՍԱՏՐՅԱՆԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 22-րդ հոդվածի առաջին մասի 8-րդ կետով և հիմք ընդունելով համայնքի ավագանու անդամ, Հայկազ Այսերի Ասատրյանի դիմումը՝ իր լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու մասին.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ է

1.Դադարեցնել՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մրգաստան համայնքի ավագանու անդամ Հայկազ Այսերի Ասատրյանի լիազորությունները:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Ավագանու անդամներ	4 կողմ	Օդեմ	0 ձեռնպահ
Հ. Եդիգարյան			
Թ. Ջանգիրյան			
Ա. Ասատրյան			
Ա. Հովակիմյան			

ՄՐԳԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ռ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

2018թվական հոկտեմբերի 31
գ. Մրգաստան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ
ՄԱՐԶԻ ՄՐԳԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մրգաստանի համայնքապետարան, Մրգաստան 3/15
հեռ. 0231-6-38-10, 094-80-53-63

ՈՐՈՇՈՒՄ

«31» հոկտեմբերի 2018թվական թիվ 37

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ԾԱՆԱՊԱՐՀՆԵՐԸ ԽԵՃԱՊԱՏԵԼՈՒ ՀԱՄԱՐ՝ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 7-րդ կետով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ է

1.Հատկացնել՝ 950 000 /ինը հարյուր հիսուն հազար/ դրամ, խիճ ձեռք բերելու նպատակով համայնքի փողոցներում փոսալցման աշխատանքներ իրականացնելու համար:
2.Համայնքի ղեկավար՝ /Ռ. Խաչատրյանին/ իրականացնել սույն որոշումից բխող իրավական գործառույթները:
3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Ավագանու անդամներ	4 կողմ	Օդեմ	0 ձեռնպահ
Հ. Եդիգարյան			
Թ. Ջանգիրյան			
Ա. Ասատրյան			
Ա. Հովակիմյան			

ՄՐԳԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ռ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

2018թվականի հոկտեմբերի 31
գ. Մրգաստան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ
ՄԱՐԶԻ ՄՐԳԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մրգաստանի համայնքապետարան, Մրգաստան 3/15
հեռ. 0231-6-38-10, 094-80-53-63

ՈՐՈՇՈՒՄ

«31» հոկտեմբերի 2018թվական թիվ 38

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻՑ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՏԱՐԲԵՐ ԲՈՒՀԵՐՈՒՄ ՍՈՎՈՐՈՂ 2018-2019ԹԹ. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ, ԱՌԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻՆ ՍԵՊՏԵՄԲԵՐ-ԴԵԿՏԵՄԲԵՐ ԱՄԻՍՆԵՐԻ ՀԱՄԱՐ՝ ՃԱՆԱՊԱՐՀԱԾԱԽՍ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 7-րդ կետով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մրգաստան համայնքից Երևան քաղաքի տարբեր բուհերում առկա ուսուցմամբ սովորող ուսանողների ճանապարհածախսը հոգալու համար, հատկացնել յուրաքանչյուր ուսանողին՝ 44 000-ական /քառասունչորս հազար/ դրամ, համաձայն հավելվածի:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Ավագանու անդամներ	4 կողմ	Օդեմ	0 ձեռնպահ
Հ. Եդիգարյան			
Թ. Ջանգիրյան			
Ա. Ասատրյան			
Ա. Հովակիմյան			

ՄՐԳԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ռ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

2018թվական հոկտեմբերի 31
գ. Մրգաստան

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզի Մրգաստան համայնքի
ավագանու 2018թ. հոկտեմբերի 31-ի, թիվ 5
հերթական նիստի թիվ 38 որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻՑ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՏԱՐԲԵՐ ԲՈՒՀԵՐՈՒՄ ՍՈՎՈՐՈՂ 2018-2019ԹԹ. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ, ԱՌԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻՆ ՍԵՊՏԵՄԲԵՐ-ԴԵԿՏԵՄԲԵՐ ԱՄԻՍՆԵՐԻ ՀԱՄԱՐ, ԾԱՆԱՊԱՐՀԱԾԱԽՍ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1.Խաչատրյան Մանուկ Պավելի-44 000 /քառասունչորս հազար/ դրամ

2.Սարգսյան Լիլիթ Արթուրի-44 000 /քառասունչորս հազար/ դրամ

3.Ասատրյան Հրայր Սարգսի-44 000 /քառասունչորս հազար/ դրամ

4.Քերոբյան Սևակ Խոսրովի-44 000 /քառասունչորս հազար/ դրամ

5.Քերոբյան Անի Խոսրովի-44 000 /քառասունչորս հազար/ դրամ

6.Ասատրյան Արամ Վանիկի-44 000 /քառասունչորս հազար/ դրամ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մրգաստանի համայնքապետարան,Մրգաստան 3/15
հեռ. 0231-6-38-10, 094-80-53-63

ՈՐՈՇՈՒՄ

«31» հոկտեմբերի 2018թվական թիվ 39

ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի հոդված 18-ի առաջին մասի 7-րդ կետով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ է

1.Լեռնուհի Սերյոժայի Հովհաննիսյանին ամուսնու մահվան կապակցությամբ հատկացնել՝ 50 000 /հիսուն հազար/ դրամ:

2.Մարինե Ալբերտի Սմբատյանին դստեր մահվան կապակցությամբ հատկացնել՝ 50 000 /հիսուն հազար/ դրամ:

3.Մարինե Մելիքսեթի Խաչատրյանին ամուսնուն բուժման տանելու նպատակով հատկացնել՝ 30 000 /երեսուն հազար/ դրամ:

4.Օնիկ Գերասիմի Հակոբյանին երկրորդ վիրահատության գնալու համար հատկացնել՝ 30 000 /երեսուն հազար/ դրամ:

5.Վարազդատ Ամասիայի Ասատրյանին ստացիոնար բուժում անցնելու նպատակով հատկացնել՝ 30 000 /երեսուն հազար/ դրամ:

6.Մինաս Պետիկի Սմբատյանին կնոջը բուժման տանելու նպատակով հատկացնել՝ 50 000 /հիսուն հազար/ դրամ:

7.Խաչիկ Սամվելի Ավագյանին բուժման գնալու համար հատկացնել՝ 30 000 /երեսուն հազար/ դրամ:

8.Գայանե Ռաֆիկի Գևորգյանին առաջին խմբի հաշմանդամ ամուսնուն բուժման տանելու նպատակով հատկացնել՝ 30 000 /երեսուն հազար/ դրամ:

9.Մայիս Արարատի Թովմասյանին բուժման գնալու համար հատկացնել՝ 20 000 /քսան հազար/ դրամ:

10.Սարգիս Հրանտի Ասատրյանին, որպես երկրորդ խմբի հաշմանդամ բուժման գնալու նպատակով հատկացնել՝ 50 000 /հիսուն հազար/ դրամ:

11.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Ավագանու անդամներ	4 կողմ	Օդեմ	0 ձեռնպահ
Հ. Եդիգարյան			
Թ. Ջանգիրյան			
Ա. Ասատրյան			
Ա. Հովակիմյան			

ՄՐԳԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ռ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

2018թվական հոկտեմբերի 31
գ.Մրգաստան